

ԽՈՒՄԱԿ ԳՅՈՒՆԼՆԱԶԱՐՈՅԱՆԻ՝ ԿՐՏՄԵՐ ԴՈՐՈՑԱՀԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ
ՀԱՍՏՅՆԳՐՎԱԾ ԵՐԿԵՐԸ

Ա. Ա. Մելքումյան

Սույն հոդվածում ներկայացված են նույնանունով շրջանի մանկական արձակի պոետիկո ղեմընրից մեկի՝ Խ. Գյուլնազարյանի կրտսեր դարձուհաճաճակ երեխաներին ծաղեղազրված երկերը, որոնք նրանց սովորեցնում են ազնվություն, հոգեկան կատարելություն, լավ վարք, դրական բացառականից գաղտնի ունակություններ, նաև լուծում մանկավարժական կարևոր խնդիրներ:

Նրա «Լավ ճանապարհորդները», «Պատմվածքներ Արտուսիկի մասին», «Դեռ դպրոց չենք գնում», «Զարմանալի հեքիաթներ» երկերը համապատասխանում են մանկական գրականությանը ներկայացվող պահանջներին, ունեն ուսուցողական և դաստիարակչական մեղմեղմ, որոնք բխում են մեր դասական մանկագրությունից և ունեն նաև արդիական հնչողություն:

Խաժակ Գյուլնազարյանը նույնանունով շրջանի մանկական արձակի նշանակալից ղեմընրից է: Նրա գրական ուղին սկսվում է նախքան Հայրենական պատերազմը: Գյուլնազարյանի առաջին գրքույկները ամենակրտսերներին ուղղված «Զար թագի մահը» և «Մուլի վերջը» չափածո գործերն էին, որոնք հրատարակվեցին 1938 և 1940 թվականներին: Դրանք պատմություններ էին կենդանիների մասին, որոնք դատապարտում էին ծաղկությունը և չարիքը: Չնայած այն հանգամանքին, որ վերոհիշյալ երկու գործերը անթերի չէին, բայց փոքրիկների վրա թողնում էին զանկալի ազդեցություն:

Պատերազմից հետո երիտասարդ ստեղծագործողի հետաքրքրությունների աշխարհում և թմամերի ոլորտում փոփոխություններ են կատարվում: Թողնվել չափածոն՝ նա անցնում է պատմողական ժանրին: 1951 թվականին լույս է տեսնում պատմվածքների առաջին ժողովածուն՝ «Դաշտի տները և հյուրերը» խորագրով, որտեղ ակնհայտորեն երևում էին ձեռնարկի ստեղծագործական բնորոշ գծերից մի բանիսը՝ առանձնապես մարդկային հոգու գաղտնաբանները թափանցելու հմտությունը և հակիրճ գրելու ձիրքը: Հենց այս ժողովածուից էլ սկսվում է գրողի և մանուկների ստեղծությունը, և նրա հաջորդ քայլերն առավել ևս հանգեցնում են դրան: Իրար են հաջորդում նախադրողականին կամ կրտսեր դարձուհականին ուղղված գրքույկների շարքերը՝ «Ով ինչ գիտե» (1952), «Լավ ճանապարհորդներ» (1953), «Բոլորինն է» (1954), «Նազիկի սիրելիները» (1958), «Բարի լույս, մայրիկ» (1964), «Պատմվածքներ Արտուսիկի մասին» (1970), «Զարմանալի հեքիաթներ» (1974), «Դեռ դպրոց չենք գնում» (1978), որոնցում հեղինակը կարողանում է թափանցել փոքրիկների հոգու գաղտնաբանները և վարպետորեն ներկայացնել նրանց հետաքրքրությունները, ներաշխարհը և հոգեբանությունը: Խաժակ Գյուլնազարյանի երկերը լուծում են մանկավարժական շատ կարևոր խնդիրներ: Դրանք զարգացնում են երեխայի խոսքը, գեղարվեստական ճաշակը, ծանոթացնում են ժողովրդական կյանքին, բնությանը, օգնում են բարոյական դաստիարակությանը: Յուրաքանչյուր ստեղծագործություն բխում է մանկական կյանքից, հետաքրքրությունների աշխարհից, նրա հոգու գաղտնաբաններից և պատասխանում է երեխային հուզող հարցերին: Գյուլնազարյանի մանկական երկերը ներխային սովորեցնում են ազնվություն, հոգեկան կատարելություն, լավ վարք, դրական բացառականից գաղտնի, ունակություն:

«Մանկական գրքերը ստեղծվում են դաստիարակության նպատակով, իսկ դաստիարակությունը մեծ գործ է՝ այն որոշում է մարդու ճակատագիրը»¹, - Բեկինսկու հայտնի ասույթը դառնում է ուղենիշ Գյուլնազարյանի կյանքում և ուղեկցում մինչև կյանքի վերջը:

1940-70թթ. ժամանակահատվածի վերաբերյալ ավելի հանգամանորեն տեղեկություններ ունենալու համար մեզ օգնության է գալիս նույնանունով շրջանի

նշանակալից դեմքերից մեկի՝ խաժակ Գյուլնագարյանի վաստակը մանկական գրականության մեջ: Նա այն եզակի դեմքերից է, որ ստեղծագործել է բոլոր տարիքի ներխաճների համար, նրանց ուղեկցել կյանքի բոլոր շրջաններում: Երբեք չդավաճանելով իր սիրելի մանուկներին՝ Գյուլնագարյան-մանկագիրը միշտ նորովի ներկայացավ բոլորքնով ներխաճների նրկայությունը և զարգացնելով նրանց միտքը:

Ն. Գյուլնագարյանի բնդուն ու բազմաբնույթ վաստակի զգալի մասը հասցնեցրված է նախադարձական տարիքի ներխաճներին: Նման երկերում հեղինակը, ելնելով նշված տարիքի առանձնահատկություններից, ներկայացրել է մեծերին ընդօրինակելու, կենդանական աշխարհը ճանաչելու, հանրօգուտ աշխատանքով տարվելու, լավն ու վատը իրարից զանազանելու և այլ գծեր: Նա իր մանկական երկերում փոքրիկներին առաջնորդում է դեպի մեծ աշխարհ, նրա առջև բացում կյանքի դռները, նպաստում փոքրիկ աշխարհաճանաչմանը և միևնույն ժամանակ դաստիարակում ազնիվ զգացմունքներ: Այս ամենը դրված է նրա երկերից յուրաքանչյուրի հիմքում, ինչն էլ ապահովում է դրանց հաջողությունը: Մանկագրի հաջողության գրավականը կարելի է համարել «Լավ ճանապարհորդներ» գրքույկը, որն իր արժանիքների համար գնահատվել է և թարգմանվել մի շարք լեզուներով:

Գրքույկի պատմվածքաշարի իրար կապող օղակներ և գլխավոր հերոսները փոքրիկ Արան և նրա թավամազ Քոթոթն են: Այս երկու ինքնատիպ հերոսների միջոցով հեղինակն իր ընթերցողներին ծանոթեցնում է շրջակա միջավայրին, ամենատարբեր առարկաների ու նրկայների հետ: «Լավ ճանապարհորդներ» գրքի փոքրիկ հերոսի՝ Արայի միջոցով հեղինակը քաղաքում է աշխատասիրություն, սեր ու հարգանք մեծերի հանդեպ: Այս ժողովածուում հեղինակն օգտվել է մոտերորեն ու գրավիչ գրուցելու, կյանքը մանկական տեսանկյունից ներկայացնելու, առաջին դեմքով պատմելու հնարներին, որոնք իրական են դարձնում պատումը, օգնում են մոտեց գործել փոքրիկների ինքնատիպ ու կախաբաղական աշխարհը:

Գրողի «մանկանալու» անուրանալի հատկանիշն է կազմում նրա «Պատմվածքներ Արտաշիլի մասին» շարքը, որտեղ հեղինակը փորձել է կյանքը պատկերել չորս տարեկան ներխաճի ընկալմամբ և ընդգծել կյանքի, շրջակայի նկատմամբ նրա այն դրաման վերաբերմունքը, որը պետք է բազմալերվի: Հերոսի ընկալման լույսի տակ էլ բացվում է նրա կյանքի պատկերը, որի փոխանցողն այս անգամ դառնում է ինքը՝ ներխաճ:

Գրքում իրականն ու նրկայականը այնպես վարպետորեն են միահեյուսվում, որ դժվար է սահմանագատել միմյանցից: Այսպես, սաքսաֆոնիստ արքայադղ «Այլանդակի մասին հեքիաթում» ընկնում է մի գվարճալի անտառ, որտեղ ամեն ինչ կարմիր գույն ունի: Պարզվում է, որ այդ անտառը ներկել էր գրողի թոռ Շուշանիկը, որը գծել էր նաև մի այլանդակ կենդանի իրար կցելով նապաստակի ականջներն ու փղի կնճիթը, ուղտի սապատն ու մկան պոչը և այլն: Պատմվածքը հուշում է ճիշտ նկարելու խորհուրդ: Կամ էլ՝ շատակներ կարավի փորը ցավում է («Չալտիկ-կարավի մասին») և նա գնում է պոլիկլինիկա, ուր ասում են, որ նա տառապում է թկլատից, շատակներից, շատակներից, իրականություն: Իրեն դիտ նշանակում են կովերին, կաթերին: Եվ ահա աճող կրկնությամբ շարունակվող հեքիաթի հերոսը գարու համար գալիս է Շուշանիկի մոտ, նա էլ՝ պապի, պապն էլ՝ պահանջում է պաշիկ:

Հեքիաթներում կենդանու անձնավորմանը, խաղ հիշեցնող աճող կրկնության հնարանքին, տեղին օգտագործվող ծայրանմանությանը ավելանում է կենդանիներին կրկնակի անունով բնութագրելը (Արջուկ-փրշուկ, Չալտիկ- կարավիկ, Փիսիկ-բամբասիկ և այլն): Այս ամենից բացի հեքիաթներում առկա է անկաշկանդ գվարթություն, որն իր խորքում թարգնում է իսկական մարդկային գծերն արժեվորելու և բացասականը մերժելու գաղափարը:

Նախադարձականին հասցնագրված ստեղծագործություններին բնորոշ է հաճախակի հանդես եկող մեծերի ու փոքրերի փոխհարաբերության հարցը, որը միշտ ներկայացվում է մանկական ընկալմամբ և պահանջում ուշադրություն:

Մանուկների համար գրված գործերից է նաև «Դեռ դարձ չենք գնում» ժողովածուն, որը բաղկացած է 16 գլուխներից: Վնգուկեն տարեկան Շուշանիկն ու չորս տարեկան

Ապերիկը, որի իսկական անունը Գոռ է, այս շարքի ենթոսներն են, որոնք, չնայած դեմ փորը են, բայց շատ բան գիտեն: Ինչպես նախորդ ժողովածուներում, այնպես էլ այստեղ, մեր փորքիկներին կյանքի ճիշտ ուղի են ցույց տալիս մեծերը՝ մայրիկները, հայրիկները, տատիկներն ու պապիկները, ավագ բույրերն ու նոբայրները: Հսելով մեծերին՝ նրանք ցանկանում են միշտ բարի գործեր անել, ինչ-որ բանով պիտանի լինել: Շուշանիկն ու Ապերիկը միշտ հիշում են պապի խոսքերը «Ամեն մարդ իր կյանքում գոնե մի ծառ պիտի տնկի, թե՛ էլ ինչ մարդ, որ ոչ մի ծառ չի տնկել: Այսպիսի մարդ բանի պետք չէ»²:

Հենց այս խոսքերն էլ պատճառ են դառնում, որ մեր փորքիկ ենթոսները, թույլտվություն խնդրելով մայրիկից, միանան դպրոցականներին և նրանց հետ ծառեր տնկեն: Նախորդ ժողովածուներում արծարծած աշխատասիրության գաղափարը շարունակվում և նոր երանգ է ստանում:

Հեղինակը յուրաքանչյուր տողի մեջ դաստիարակչական իմաստ է ներարկում, որն իր ցանկալի ազդեցությունն է թողնում ընթերցողների վրա: Իրոք, շատ կարևոր դեր է ստանձնում Գյուլնազարյան մանկագիրը, որովհետև յուրաքանչյուր բառ պետք է տեղին օգտագործվի մանկական երկերում, հետաքրքիր ու ուսանելի լինի այն դեռևս նոր կյանք մտնող մտքով և հոգով մարդու մանուկների իսմար:

Շուշանիկն և Ապերիկի միջոցով հեղինակը շատ պատմություններ է պատմում՝ մեկը մյուսից զարմանահրաշ, կախարդական, հուզիչ ու գայթակղիչ: Նա սովորեցնում է երեխաներին սիրել ու խնամել կենդանիներին, որոնք անպաշտպան են, հոգատարության կարիք ունեն, միշտ լսել մեծերի խորհուրդները: Ընթերցելով այս գիրքը՝ փորքիկները շատ բան կարող են սովորել, ինչի մասին դեռևս գաղափար չունեն: Օրինակ, ծանոթանալով այն գլխին, որտեղ հեղինակը պատմում է Շուշանիկի, Ապերիկի, քաղաքի տատիկի ու պապիկի պատմությունը, ընթերցողը կհասկանա, թե այդ ինչ «լացկան բան» էր սեղմում փորքիկների կողորդը, երբ հիշում էին գյուղը, տունը, տատիկին ու պապիկին:

Մտքաց չէին հասկանում, թե ինչու քաղաքի տատիկի ու պապիկի հետ ամառանոցում գտնվելու քնկրքանքը հաճախ ուղեկցվում էր «թարթիչներին հասնող արցունքներով», երբ հիշում էին գյուղի տունը, բանջարանոցը, տատիկին ու պապիկին, հորեղբայր Հարութին ու նրա նրկնագույն «ծիգուլին»:

Շուշանիկն ու Ապերիկն էլ բոլոր նրձխանների նման չգիտին, որ իրենց ապրած զգացմունքները (սեր, ուրախություն, խլորություն) անուններ ունեն և որ այդ «լացկան բան» էլ կարգու է կոչվում: Հոգեբանական այս յուրահատուկ պահերն անգամ իս. Գյուլնազարյանի մոտ հետաքրքիր մեկնաբանություններ են ստանում: Ընթերցողի աչքի առաջ կարծես հաստնանում է փորքիկը, սովորում հուզվել, տխրել, հասկանալ մարդկային շատ զգացմունքի իմաստը:

Այստեղ մանկագիրը և՛ հոգեբան է, և՛ մանկավարժ: Նա կարողանում է մեծերի զգացմունքի աշխարհին հաղորդակից դարձնել նաև փորքիկին, որոնց համար աշխարհը միայն գունավոր ու պայծառ երազ է: Լավն այն է, որ մանկագիրն այնքան նրբորեն է բացում երեխայի հոգու աչքերը, որ երբեք չեն փշրվում նրա գունավոր երազները: Գյուլնազարյանը նուրբ, զգուշավոր մանկագիր է, գիտի աղելու ձևը, չափը, ժամանակը...

Ելանքին նախադրոցականի վճիռ ու պարզ աչքերով նայելու հատկություն ունի իս. Գյուլնազարյանը, ունի ուսուցողա-դաստիարակչական մեկնակետ, իսկ փորքին առանց խրատի ակտիվացնելու նրա գրելաձևը շարունակվում է նաև հետագա տարիներին գրած գրքուկներում, որտեղ հեղինակին հաջողվել է բոլոր իրավիճակներում գծել հետաքրքիր կերպարներ ու քաջատնայություն բացել հերոսների հոգեկան աշխարհի նրբին նկերները, տրամադրել նրանց դեպի ազնիվ ու գեղեցիկ: Միմյան ստեղծագործություն է «Մոռացված ծերունու հեքիաթը», որն իր բնույթով տարբերվում է շատ մանկական երկերից: Այս հեքիաթի հերոսը մի զարմանալի ծերունի է, որ դուրս է եկել խաղաթղթերի միջից «Նա ոչ թագավոր էր, ոչ էլ զինվոր: Խաղաթղթերի մեջ չորս թագավոր կա, չորս զինվոր, չորս աղջիկ, դրանք երբեմն՝ երբեմն՝ իրար հետ գրոյց են անում, դրա համար էլ երբեք չեն ձանձրանում, իսկ այդ ծերունին ընկեր չունի»³:

Հեղինակի վարպետ Գրիշը կարողանում է կնրտել նոր ու հետաքրքիր կերպարներ, ինչպիսիք են Կծած խնձորը, Դեղին տերևը, Տոկոս ծիլը, Լուրջ օդաքիչը, Ռետինն ունին,

վաղագույն տիկնիկը, Մրաքիթ աղվեսը, Անխելը բռնաբռնչիկը, Ջմեռ պապն ու Չար դատավորը, Մամա ջանը, Գորշ մկնիկը և ուրիշներ, ինչը վկայում է Գյուլնազարյանի նախադպրոցական հասակի ներխանների համար գրած գրքերի արժեքը, նրանց մանկավարժական ու հոգեբանական, գեղարվեստական հմայիչ հենակետերը, որոնք և նրանցից շատերին օժտում են մնայուն արժեքներով:

Ծանոթանալով խաժակ Գյուլնազարյանի նախադպրոցական տարիքի ներխանների համար գրված նրկներին, պարզ է դառնում, որ, հեղինակը, հաշվի առնելով ներխանների տարիքային առանձնահատկությունները, կարողանում է պատասխանել նրանց հուզող

Մանկական գրականության համար կարևոր է կենսախնդությունը, նաև տվյալները, թախիծը: Սրանք երեխան պետք է ընկալի գուգահեռաբար: «Խ.Գյուլնազարյանի գրվածքները մի մեծ արժեք ունեն. դա կենսական հավաստիությունն է: Գյուլնազարյանն ունի հուսմունք պատմելու թանկ շնորհք»⁴:

Ինչպես մեծն Լոռեցին է ասում. «Մանկությունը մարդու էն ամենաընդունակ շրջանն է, երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ առնում ու զարգանում շարունակ: Հետևաբար, շարունակ պետք է սնունդ տալ նրան, որ միշտ աճի ու զարգանա» 11:

Մանկական գրականությանը ներկայացվող այս պահանջները մենք նկատում ենք Գյուլնազարյան-մանկագրի մոտ, որը քաջ գիտի նաև մանկական գրականության տնտությունը, պահանջներ, որոնք գալիս են մեր դասական մանկագրությունից բխող ժամանակներում էլ կոչված են իրագործելու մանկական երկի ուսուցողական և դաստիարակչական, ճանաչողական և արդիական էությունը:

Խաժակ Գյուլնազարյանի ոճի քնարականությունն ուրախ է, կյանքոտ... Նրան անընդմեջ օգնության են գալիս սրամտությունը, ժողովրդական բանահյուսության մասունքները, ոճի անկաշկանդ տեղանցումները...: Գեղարվեստական այս տարրերով նա բազմախաղով է մանկական նրագների աշխարհը, որը լի է հեքիաթներով՝ դեռ չստանալով, չգրված:

Резюме

В данной статье представлены произведения одного из знаменитых представителей детской прозы послевоенного периода, Хажака Гюлназаряна. Эти произведения адресованы детям младшего школьного возраста и прививают им честность, умение отличать хорошее от плохого, положительное от отрицательного, решают очень важные педагогические вопросы, тем самым достигая идеального душевного состояния детей.

Его произведения “Хорошие путешественники”, “Рассказы об Артутике”, “Еще не ходим в школу”, “Удивительные сказки”, соответствуют требованиям детской литературы, имеют поучительную и воспитательную отправную точку, которые исходят от нашей классической детской литературы. Так же они приобретают современное звучание.

Ծանոթագրություններ

1. В.Г. Белинский, Н.Г.Чернишевский, Н.А. Добролюбов, о детской литературе, М., Детгиз, 1954, стр. 42.
2. Գյուլնազարյան իւ. Մ., Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, ԳԱ, 1961, էջ 15:
3. Գյուլնազարյան իւ.Մ., Դեռ դպրոց չենք գնում, Երևան, Լույս, 1987, էջ 32:
4. Հայ մանկական գրականության պատմության ուղիագծեր, Երևան, Լույս, էջ 124: